

## ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՏԱՆԻՑ

Ս. ՅԱՐՄԱՐԵԱՆ

VII

ՈՒԽՍԱԿԱՆ ԱԶԳԵՑՑՈՒԹԻՒՆԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Նախկին մի նամակովս զրել էի, թէ կրօնական միստիաների գործաւնէութիւնը այնքան եռանդուն է, որ Ուրմիալում աւժմ իրենց հին եկեղեցուն պատրիանու ասորիներ չեն մնացել բացի մի քանի գիւղերից, որոն ո իրենց ընաւորութեամբ շատ զանազանում են կրօնափոխներից. Ասորիների բուն երկրը Ուրմիալին սահմանակեց՝ Տաճկաստանի Զոլամերիկ գաւառն է, Աստրելի ասորիները երկու խմբի կարելի է բաժանել. մի մասը, որ համեմարտար դաշտավին ժողովուրդ է, թիւրքական կառավարութեան ազդեցութեամբ սորկացած, փճացած բնաւորութեան դէք է, դարձած. արանք միծ-մէծ խմբերով զալթում են Թիւրքիալից Պարսկաստան և Պարսկաստանից Թիւրքիա, նաևելով, թէ որդեռ կարող են բնակւել ու աւելի լաւ յարմարութիւններ սղեցնել. Միւս մասը բնակում է լիւնային բարձրութիւնների վրաք նրանց մասին լոճախ լսում ենք թէ քաջ են ու անկախութիւն սիրու Սրանք Տաճիկ կառավարութեան հետ ոչ մի լարաբերութիւն չեն ուզում պահպանել, բացի սովորական որոշ գուրքերը որը իրենք են գնում լանձնում կառավարութեան ներկայացւցչն, առանց իւով տալու, որ կառավարութեան մարդ ողք դնի իրենց երկիրը. Սրանք երբեմն մրան, այն էլ անբերի տարիները, իրենց բարձրութիւններից ցած են իջնում հազ ձեռք բերելու համար. Այս կարիքը լրացնելուց հերու դարձեալ բարձրանում են իրենց տեղը և շարունակում են ապրել իրենց սովորական կեանքով.

Զոլամերիկի ասորիների նման Ուրմիալի ասորիներն էլ բաժանում են երկու մասի նոնանման բնաւորութիւնների պատճառով. Մի մասը դաշտեցիներն են, որոնք զբարում են, ալովէս ասած, խաչագոլութեամբ.

որոշեալ պարապմունք չունին, ալլ շարունակ ալդրելից դաշտում են կովկաս և Ռուսաստրան, իսկ այն դեղբում, թէ ինչ ձեերով են փոշ ձեռք բերում, դու շատերին լալրնի է, Աւոք ձեռք բերած վասրակով վերադառնում են դուն. մի քանի ժամանակ ապրում, որպէս զի ունեցածը սպառելոց չեթոք նորից ձեռք առնեն պանդխոռութեան գաւաղանը, Որանց հակառակ՝ միւս մասը, որ բոլորովին հակառակ ընաւորութիւն ունի, կենադարացած է, մի քանի գիւղերում, Սրանք շար անզամ իրենցից եռապատիկ քառապատիկ աւելի գիւղերի հետ մի գիւղ կազմելով ապրում են, բաց չընալելով դրան, իրենց անկախութիւնը չեն զիջում նրանց, Պակաս չեն եղել դէքեր, երբ սրանց մի փոքրիկ զիւը դիմադրել է անազին քառակութեամբ քրդերի, որոնք ալսուել էլ, ինչպէս Տաճկասրանում, սիրում են երբեմն-երբեմն ուրիշ աշխատանքի համեն առնել, Այս գիւղերը բոլորն էլ, առանց բացառութեան զինւած են, և չնորհիւ աւոք բանի է, որ չնակելով իրենց թիւ փոքրութեան, ըրջապառողներին պատրկառանք են ազդում, Սրանք երկրագործներ են և երբեք չեն գալթում ուրիշ երկիր, իրենց մշակութեամբ սրացած արդիւնքով կառավարում են<sup>1</sup>.

Ուրմիակում հասրադած կրօնական քարոզիչների գործունէութեան հետեանքին նալելով մի շար աչքի զարնու Փաքու է նկարուում, այդ այն է, որ կրօնափոխներ լինում են միան դաշտեցիներից, ալմինքն նրանցից, որոնք զբաղւում են ասորոշ գործերով և որոշ խոսրումների համար պատրաստ են մի քանի դասակ կրօնների իշխանութեան դակ մոնել, Այդ այն զինւած և անկախութիւն սիրու ասորի գիւղերից և ոչ մինում չեն մրել նոր կրօնները, նրանք մնացել են հաւադարիմ իրենց հին ասորական և կեղեցուն և իրենց կրօնապետ Մար-Շեմօնին.

Ուստ քարոզիչներն էլ սկսեցին գործել նոյն դաշտեցիների մէջ և չաջողութիւն գտան ուստաշաւանութեան դարածման դեսակէտից, բաց ոչ ուստական ընդհանուր պետական շահերի դեսակէտից, Բանը նրանումն է, որ այն ընդհանուր համակրանքը, որ կատ ամբողջ Ատրպատականում դէպի ուսւները, Ուրմիալում փոխւեց ընդդիմադիր ուժի:

Հաւերի կրօնափոխ լինելն էր, որ Ուրմիալի մահմեդական տարրը զրգուեց, Ասում են, որ Ուրմիալի հաւերը շատ քիչ են զանազանուում ասորիներից, խօսում են նրանց նման, կենցաղավարութեան ձեերը նոյնն են, ինամիական կապեր ունին ասորիների հետ, ապրում են նրանց հետառն, Անա ալս հանդամանքից օգտւեց Ասորական եպիսկոպոս Մարիո-

<sup>1</sup> Ուրմիալի ասորիների մասին դիւեկութիւններ հաւաքել եմ, բացի լրագրական և ալլ զրաւոր աշբիւրներից, ոլխաւորապէս ակնուել երկար ժամանակ ապրած, և նրանց կեանքին լաւ ծանօթ արժանահաւար մարդկանցից:

նա՞ն, որ արդէն լուսադաւանութիւն է ընդունել, և հակերին էլ ցուցակագրեց ասորիների հետ խառն և ալդպէս էլ անցկացրեց լուսադաւանութիւն ընդունածների ցանկը. Այդ հանգամանքին շար նպաստեցին նրա քարոզները, նա իւր քարոզներում շար անդամ կրկնելիս է եղել, որ ախուճերն ուսուադաւանութիւն չընդունածները իրա ունք չպիտի ունենան ձեռք բերել Ուսուասրան անցնելու, նրա խօսքերը հասրատելու համար կարծես, պատահմամբ այն ժամանակ մի քանիսը, օրինական բոլոր կարգերը կադարած չլինելով, թաւրիզի ուսուաց հւապառուսարանից փաւերացում չսրացան Ռուսասրան անցնելու, Այդ լուրը հասաւ Ուրմի ասորի եպիսկոպոսի խօսքերը, կարծես, ճշուելու համար. Խակ թէ ինչու նրա հետմանքը եղաւ թիւրքերի անբաւականութիւնը, Դրա պատճառն էլ որն գեսականն է.

Պարսկասրանում համալինական հողարիսութիւն չկամ Հոլլ սեփականութիւն է մասնաւոր մարդկանց—աղաների, խաների, բէզերի և հոգեւորականների. Այդ սեփական հոլի վրաէ ապրում են նրանց գիւղացիները, Գիւղացիները իրենց տէրերի համար որոշ պարտականութիւններ են կատարում, որոշ աշխատանքներ, Թիւրքերին պարկանած հողերի վրաէ են ապրում նաև քրիստոնեակ գիւղացիներ—առորիներ և հակեր, Ուսուադաւանութիւն ընդունած ասորիները, խրոխուացած հզօր տէրութեան պաշտպանութիւնով սկսել էին զանց առնել իրենց պարտականութիւնները դէպի հողատէրերը, Խակ երբ սկսեց ուսուադաւանութիւնը հակերի մէջ էլ տարածելի, թուրք հողատէրերը սպասելով, որ հակերն էլ նոյն դիրքը կը բռնեն, ինչ որ ասորիները, եկան այն եղակացութեան որ ուս միախօնարների զործունէութիւնը բանում է դէպի իրենց (թիւրք հողատէրերի) դնդեսական քաչքալումը. Ալարելից առաջացաւ նրանց հակակրանքը դէպի ուսուները, որը հասաւ ազնոել, որ, բացի լալինի ցոլցից ընդէմ ուս քահանաների, թաւրիզի Ուսուաց հիւպատոսը, անցեալ ամառ Ուրմիալում եղած ժամանակը, չըկարողացաւ մի կորոր հոլ ձեռք բերել ուսուաց եկեղեցու շինութեան համար, Ոչ ոք չըհամաձանեց իւր հողերը ծախել, թէկուզ շար լաւ գնով.

---

Մինչեւ ամբողջ Առողջառականում ուսուաց ազդեցութիւնը օր օրի վրաէ ածում էր: Կան երեսովթներ, որոնք զարմանալի պարզութեամբ ցուց են բալիս, թէ որքան այս երկիրը ենթակաէ է ուսուական ազդեցութեան: Ենորիւ պետական ուժիմի (=կառավարութեան եղանակի) Պարսկասրանում շար սովորական բան է կազքի և առ հասարակ գուքի անապահովութիւնը Խւրաքանչիւր պաշտօնեակ, չար ասրութիւն եղած դէպում, միջոցը ձեռքից բաց չի թողնի իրեն սովորակեալին, մի չանցանք պատճառ

բռնելով, այնպէս պլոկել, որ համարեա հացի կարօվ թունի: Շնորհիւ հացի թանգութեան էլ, երբեմն պատահում են ամբոխալին լարձակումներ՝ այս կամ այն հարուստի դան վրայ և, բացի ամբարերի, հացը դասելուց, դան մէջ էլ կողոպում ու փունն էլ աւերակ են դարձնում: Այդ միջոցները ի հարկէ ամբոխին չեն կշտացնում, իսկ հարուստներին էլ ահի ու երկրութիւն մէջ են պահում: Ուրեմն երկու դասակարգն էլ իրենց վիճակից գոհ չըպիտի լինին և իսկապէս գոհ էլ չեն: Թէ հարուստները, թէ աշքառները, բաւական մեծ թւող մարդիկ, առաջնունները վաճառականական գործերով, երկրորդները բանւորութեամբ ելել են կովկասի շատ քաղաքներում ու այն ուելերի մահմերականների կեանքին լաւ ծանօթ են: Գիտեն, որ այնուել ալդ ուեսակ երեսով գեղի չի ունենում, այնուել զուքի ապահովութիւն կաք: Դրանից համոզւում են, որ անապահով վիճակ սպելծուը, կամ ապահովութիւնը վերականգնել անկարուը իրենց ուլութիւնն է: Այդպարհառով մարդ շատ շափ անզամ լսում է թուրքերի բերանից ցանկութիւն, որ որքան կարելի է ուունները շուտ գան տիրեն այս երկիրը, գուցէ հանգստութիւնն ու առափութիւնը վերականգնեն: Եւ այդ բանը կատարւած կը լինէր երկու տարի առաջ, երբ թուրքերը լարձակւել էին հաւոց թաղի վրա: Կողոպուելու դիրքաւորութեամբ և մի քանի ուուն էլ արդէն կողոպուել էին, եթէ հաւոց առաջնորդի հեռագիրը հաւերի ապահովութեան մասին չըինէր, որը, եթէ չեմ սիսալում, պատճառ դարձաւ Արաքսի կողակների գնդի չետ դառնալուն:

Այդ դէպից չեփու ուուսաց հիւպատոսարանի անոնը աբանել շափ բարձրացել է: Ուուսահպատակները իրենց բուրումին ապահով են զդում ալսուել, որ և է ուուսահպատակի ամենաշնչին վեասի համար անզամ չիւպարոսարանի ճնշմամբ պարսից կառավարութիւնը անմիջական գոհացումն է տալիս: Խոկ չիշեալ «որունորի» (զրգումոնք) ժամանակ մի քանի կողոպուած հաւեր դարձեալ ուուսաց հիւպատոսարանի պահանջի համեմադրի ու լի վարձարութիւն սրացան: Ուուսաց հիւպատոսարանը ալսուել ունի երկու կողակ միաւն, որոնց երեալն արդէն բաւական է մեծ շարժումները դադարեցնելու համար: Թէ որքան նշանակութիւն ունի կողակը այս երկրի համար, ալդ երեսում է նրանից, որ ով էլ կողակի զլիսարկ կրի մեծ մասամբ կովկասի հաւերից, թուրքերի կովմից ընդունում է աշազաշիւ անունով, աչինքն կողակների զլիսաւոր: Ե հենց ալդ հանգամանքը բաւական է, որ տգիտ ամբոխի մէջ նրան ամէն պատճառարներից աղասի պահի: Մօտիկ անցեալում Ղաղիւնում պատճանած դէպիք բաւական պարզ ցուց է տալիս նոյն պէս, թէ սուսաց կառավարութեան հպատակների վրա էարձակւելը ինչ թանգ է նստում թուրք խուժունին, Մրգանի սուսահպատակների վրա էարձակումը կառավարութեանը հարկադրեց Ղաղին քաղաքի վրա: 20,000 սուբլի տուգանք դէնել:

Ենորհիւ մաքսալին չարմարութիւնների ռուսական մի քանի ապ-  
ւածքները, բոլորովին տիրապետում են Պարսկասպանում—բամբակի գործ-  
ւածքները, շաքարը, նաևթը և ուղիւնների, իսկ մի քանի գործարաններ-  
շատ լւա գործել են պարսից ճաշակի թուլ կողմերը և դրա համեմատ էլ  
ապրանք են պարասորում օրինակ՝ կտորներ պարսկական առիւծի նշա-  
նով, մատուցարաններ պարսից նահի պատկերով և այն <sup>1</sup>, իւ ընդհանրա-  
պէս նկարւած է, որ չնորհիւ զնի չարմարութիւնների և եւրոպական ցած-  
րեսակի ապրանքի մէջ առաջացած մի քանի խարդախումների, վերջին  
տարիները Ռուսաստանի հետ առուրուրը ահագին չափերով ծաւալում է,  
իսկ Պարսկասպանի մի քանի տեսակ ապրանքները և գլխաւորաբար չոր-  
մրգեղէնը արտածւում է կովկաս, իսկ Վոլգակի վրայով հասնում մինչև  
Նիժնի:

Ենորհիւ ալս վաճառականական չարաբերութիւնների Արդպատակա-  
նում դժւար թէ գոնսի մի միջակից էլ ցած առերական, որ կեանքում  
մի քանի անզամ կովկաս կամ հէնց Խուսաստան գնացած չըլինի, Արդ-  
պաֆճառով զարմանալի չէ այն փոփոխութիւնը, որ հետզհետէ առաջա-  
նում է ապառել այդ չարաբերութիւնների չնորհիւ, ձանապարհներին թուրք  
չարւադարների (=ձիապան), պանդոկապետների (=հիւրանոցների ուերէ-  
րի) բերանից շարունակ լսում է խոզէին (ողուսերէն խոզեալին=ուեր խա-  
նութի, գործարանի և ազն) բառը, եթէ իրենց կարծիքով գործ ունին  
կովկասու կամ առհասարակ ռուսակապատակի հետո, ինչպէս հաև Ավկա-  
սում այդ բառը ընդհանուր գործածութեան մէջ է: Պարսկասպանում քաղց-  
րաւէնիքի առուրուրը մի պատրաստը ունի բանում, և շար տեղ մարդ-  
հանդիպում է այդ խանութները ռուսական հօնդիթերքայների (=կոն-  
դիրէրակայա=conditerie) դիպարի դարձած. և այդ խանութներում պատ-  
րասորում են և վաճառում Ռուսաստանում սովորական քաղցրեղէն-  
ներ, Տեղացի հաերի մէջ շատ գործածական են դարձել ռուսական անուն-  
ներ, բացի ռուսացրած Մանեա, Արտէմ, Էլին (որ աւելի շուրջ Ռուսաստա-  
նից վերցրած կը լինին, ուն Ֆրանսիակից), լւան, նոյն իսկ անպիսի զուր  
ռուսական անուններ, ինչպէս Դմիտրի, Օլգա և այն, Նոյնպէս «կոստէկ»  
և «ռուրլի» բառերի գործածութիւնը, Յայտնի է, որ կովկասի մի քանի  
քեղերում ռուրլու և կոստէկի մէջ տեղում գործածական են «շահի» և  
«աբասի» բառերը <sup>2</sup> որոնք պարսկական դիրապերութեան մնացորդներ

<sup>1</sup> Ազգերի ճաշակին չարմարւիլ արտածւու ապրանքների համար  
արևմտեան Եւրոպակի մէջ վալուց ծանօթ առերական տաքուկա է,

ԾԱՆ. ԽՄԲ.

<sup>2</sup> Գիտէք արդէն որ շահին կովկասում 5 կոստէկի պանձադրամին են  
ասում, արասին—20 կոստէկանոց արծաթդրամին:

են, Նորն շահին և աբասին գործական են Պարսկառդանում իրրե պարսկան դրամները, Բայց պարսկական շահին, որ ալժմ ոռւսաց կոպէկից էլ պակաս է, եթէ ոռւսական մի կոպէկ էլ ընդունենք, կը սուանանք, "որ պարսկական աբասին հաւասար է ոռւսական չորս կոպէկի", Այս հանգամանքները աշքի առաջ առած այս կողմերի հաւ վաճառականները, անշուշտ կովկասի ազդեցութեան դակ, պարսկական շահին էլ (—ոռւս 1 կոպ.) կազմում են երեսակաչական 5 կոպէկներից, որով իրենց աբասին էլ քսան կոպէկ, իսկ դունը, որ ունի հինգ աբասի, դառնում է հարիւր կոպէկ. Դա էլ անւանել են ոռւրիլի և սուացւել է կարարեալ կովկասեան կոպէկ. Դա էլ հնկարի առնենք այս հանգամանքը, որ Թիֆլիսում դասը ոռւրին մի «թիւման» է կոչում, կը դեսնենք որ պարսկական դասը շուանն էլ (հաւ վաճառականների կնքած ոռւրին) մի թիւման է կազմում Աւարել գլխաւորն այն չէ, թէ այդ հաշիւը որդեպից որդել է անցել, անշուշտ շահից, աբասի և թիւման բառերը պարսկական բառեր լինելով, կովկասն է պարսիկներից վերցրել Բանն այն է, որ այդ հաշիւը Կովկասում լրացել է ոռւրիլի և կոպէկ ոռւսական բառերով, իսկ ալժմ չեր է դարձել Պարսկասուած՝ հարստացած այդ բառերով. Ոռւրիլի և կոպէկ բառերի գործածութիւնը աւելի ուրածւած է հաւ վաճառականների մէջ, բայց պարսիկ առաջնակարգ վաճառականները նոյնպէս սկսել են գործածել մանաւանդ, որ նա մեծ չարմարութիւններ է դալիս հաշիւները սովորական համրիչով (չորք=օգետ) պահելու.

Ոռւսական կեանքի ազդեցութեան դակ կեանքի շար երեսիներում ոռւսերէն լեզուն մի անհրաժեշտութիւն է դարձել. Ոռւսերէն սովորուներ, նոյն իսկ թուրքերից լինում են, այս լեզուն կարծես կամաց-կամաց հալածում է ամսուն ֆրանսերէնի գործածութիւնը, Թաւրիզի երկու հակիական թալերում էլ դպրոցներում ոռւսերէնը պաշտադիր է և առաջնակարգ կան թալերում մինն է համարում. Ոռւսաց հիւպարոսարանը մինչ երկու դարի առաջ Արամեան դպրոցին նպաստ էր դալիս ոռւսերէն սովորեցնելու համար, իսկ Լիլաւալում (Թաւրիզի մի թալ) առանց ալդափիսի նպաստի անհրաժեշտութիւն է համարուել ոռւսերէն լեզուն. ոռւսերէն են սովորեցնուած նաև ամսուն դպրոցիկացի բոլորքականների դպրոցում. Ալդպէս է նաև Արաբարտականի ուրիշ դեղերում—Սալմասոր, Արդարիլ, Ուրմի և այն, իսկ խօսակցական լեզուում, մանաւանդ Ոռւսաստանում եղած ա-լա-շիք իրենց պահուները, երբեմն խառնում են ոռւսական բառեր. օրինակ սվորոյնի (=ազար) սկունա (—ձանձրալի) և ալլու.

Հայոց դպրոցները կազմւած են կովկասի ծխական եկեղեցական դպրոցների ուղարի համաձանք, որոնք էլ իրենց հերթին ոռւսաց եկեղեցական ծխական դպրոցների ուղարից էին. Թաւրիզի օրիորդաց ուսում-

Համարանիքում ընդունւած է ռուսաց գիտազենքի ռարազը, որն օրերին մինչև անդամ սպիրակ գոգնոց և ուսնոց են դորձած: ունի:

Ահա այս բոլոր հանդամանքները, որոնց թւում են լիշած շատ մանր մուսր բաները, պարզ ցուց են բալիս որ Առրպառականում ռուսական աղջեցութիւնը հետզիւով գորելանում է: Երբեմն անպիսի բաներ են պատահում, որ մարդ տեսնում է, թէ ինչպէս Կովկասը ակամաչ կերպով իսկ աղդում է ախորեղի վրա: թէկուզ հենց իւր աշխարհաղբական դիրքի չորշ հիւ Օրինակ, բաւական է, որ Սևանաւ լին ափին մի քիչ շատ ձիւն եկած լինի, Առրպառականում արտասահմանի փոստ չի սրացում: Ի հարկէ դրանից կեանքը որոշ փոփոխութիւն է կրում, իսկ Պարսկասրանի նոր կառուցման երկաթուղին, որ ռուսները պիտի անցկացնեն, կարծես գալիս է այս երկիրը (Առրպառականը) վերջնականապէս ռուսական աղջեցութեան ենթարկելու համար:

Մի այս դեսակ մոմենտում սկսւեց Ուրմիակի կրօնական միստիակի գործունէութիւնը, որը սական, ինչպէս բեսանք քոյլածիս առաջին կիսից, չունեցաւ իւր աղջեցութիւնը ռուսական ընդհանուր սիբիրական շահների բաւակէտից, այլ ընդհակառակը սոելցեց մի բեսակ առելութիւն դէպի ռուսները Ուրմիակի շրջանում, որուցից կարու է անցնել նաև ուրիշ տեղեր:

### VIII

1900 լուս. 24 թաւրիզ

Անցեալ 99 թւի սեպտեմբերին Թաւրիզի հայ հասարակութիւնը մի շար ցաւալի կորուսոր ռընեցաւ. վախճանւեց Տիկին Մարիամ Մէլիք-Սարգսեանը: Հանգուցեալը մի զարմանալի անաքրոնիզմ էր Թաւրիզում: Նա անպէս էր նւիրւած հասարակական գործին, ինչպէս շատ քիչ է պարահում բեսնել ոչ միայն Թաւրիզում, այլ նոյն իսկ Կովկասում: Եւ նրա այս չարկութիւնը առաւել ևս աչքի էր ընկնում և կրկնակի համակրանք էր զրաւում դէպի զինքը այն պատճառով, որ հանգուցեալը մեծ կրթութիւն չունէր: Նա անցել էր ծիսական ռատումնարանի կուրս, Բայց իրեն լարուկ քնազդով գիտէր անելիքներից ամենալաւը ընտրել և նշան նւիրւել իր հոգու բոլոր ուժով: Թաւրիզի Հալունեաց Բարեղ, ընկերութեան սկզբնաւորութիւնից նա ամենաեռանդուն աշխատուլն էր այդ ընկերութեան համար: Նա շար լաւ ընբռնել էր այն, որ իիշեալ ընկերութեան ամենաառաջնակարգ անելիքն է Պարսկասրանի հայերի կրթական մակերեսութը քարձրացնելը: և մանկավարժական ասպարէզում գործուների վերաբերմա իր իւր որոշ համակրութիւններն ու հակակրութիւններն ունենալով, նա ամենան ջանք գործ էր դնում իւր ցանկացած անձերի գոլութիւնը պահպանել այն հիմնարկութիւններում, որոնց վրայ ինքը որոշ իրաւունքներ ունէր՝ անմիջապէս դորձելով Բար: ընկերութեան արհետանոցի և ման-

կապարուեզի համար, իսկ միջնորդապէս վիլաւալի լավոցների, համար, Թ. Հ. Բ. Ընկերութեան արհեստանոցի բացման ժամանակի, երբ Թաւրիզեցի-ները չէին համաձայնում իրենց աղջիկներին դալ արհեստանոց սովորելու հաւատալով զանազան սեահոգի մարդկանց գարածած լուրերին ալդ հիմ-նարկութեան մասին, Մարիամ Մէլիք-Սարգսեանը արհամարելով բոլոր բարբասանքները, ինքը առաջինը մոռաւ անդուել սովորելու և ուրիշների համար ճանապահ բանալու, որից լեռու արհեստանոցը ունեցաւ իր չա-ճախորդները որոնք ամֆ բաւականին մեծ թփ են հասնում. Նրա բոլո-քող բնաւորութիւնը մի ձիչ էր Թաւրիզի հասարակութեան անարդ լուու-թեան մէջ, որ վերջինս գիտէ պահպանել բացարձակօրէն գործած անարդա-րութիւնների դէմ, եթէ ալդ անարդարութիւնները կատարում են ագյե-ցիկների ձեռքով: Թաւրիզեցիք գիտեն համակրել, մինչև անգամ արքա-լակորել իրենց համակրանքը, բաց երբ ժամանակը հասնի, իրենց համակ-րածի համար պաշտպան կանգնելու, կամ համակրելի անձնաւորութեանը հասցրած վիրաւորանքի համար բոլորելու, այն ժամանակ կը պապան ձւեն, անարդօրէն թուլ կը դան խաչել մարդուն, առանց մի ծպուն բարձրաց-նելու կը սիրեն կը լարդեն մինին, բաց ալդ լարգելի անձնաւորութիւնը իրենց մէջ պահելու համար, երբ նրան աչս կամ այն խանումի կամ աղայի քմահաճութիւնը դուրս է շարժում ինչպէս մի իր, բոլոք չեն բարձրաց-նի. Վախը մեծերից, և անդարբերութիւնը ալսորել թուլ են դալիս շառ-ասորինութիւններ, որոնց դէմ բոլորի ուղղակի պարտաւորութիւնը հասարակութեան վրայ է ընկնում: Աւորել հաշիւներ կը քննէն, գործեր կը կատարեն, որոնց մասին անկիւններում փափոցներ կը լուեն, եկելե-ցու երեցփախը կը փոխաւի, բաց հասարակութիւնը՝ ալդ իր իրաւունքի բռնարարութիւն համարելով հանդերձ, սուս կը մեաւ Մարիամ Մէլիք-Սարգսեանը ալդպէս չէր. նա բուռքում էր, կռւում էր, Թ. Հ. Բ. Ընկե-րութեան անցեալ ամառաւաւ ընթացքում, կատարեած բացարձակ ապօրի-նութիւնների դէմ, նա միակն էր որ սրտի ցաւով բուռքում էր: Բաց նրա բուռքները իրենց ցանկալի հետեանքին չըհասան չնորմիւ մեծամասնու-թեան անդարբերութեան և հակառակորդների հասրակութեան, նթէ նա աւելի անկախ լինէր, եթէ նա ընդունիքի կապանքներ չըկրեր իր վրայ անկասկած շար ամելին կարու էր կարարել, քան արաւ, Որքան ցանկալի էր, որ նրա սակաւաթիւ մարդակիցները շարունակէին նրա ոգով բուռքել անկանոնութիւնների դէմ և որոկալ իրենց բուռքների մէջ Թաւրի-զի հասարակութեան պակասում է ըմբռու, բուռքնել, անկախ դարր, որ իւր համոզումների վրայ պնդի առանց երկիւց կրելու անկումից: Ահա ալդ դրեսակ ոգու մի պակեր էր Մարիամ Մէլիք-Սարգսեանը:

Ներկաւ մարդ ամսին թէհրանի հասարակութեան մէջ կազմէց մի «Ծրագիր Պարսկաստանի հայոց ընդհանուր կրթական վարչութեան», որ հեղեղեան է.

I. Ներկաւ Մուզափքէր-Էդին Շահը մոծ գործումն և դանկութիւն է ցուց տալիս զօրել զարկ տալու կրթութեան գործի զարգացմանը Պարսկաստանի մէջ. Նորա օրով և նորա հրամանով բացւեցին թէհրանում մի շարք դպրոցներ, նախակրթաբաններ, իսկ այս օրերս բացւեց նաև մի բարձր դպրոց քաղաքական գիտութիւններ և իրաւագիտութիւն ուսուցանելու համար:

II. Պարսկաստանի հայ ազգաբնակութիւնը, որ երկրի բոլոր միւս ժողովուրդներից առաջ զգացել է կրթութեան անհրաժեշտութիւնը և զանազան քաղաքներում՝ թէհրանում, թէուրիզում, Նոր Զուլալում, Ռաշում, Արդաբիլում, Ղազինում, Սալմասում մի քանի դպրոցներ է բացել, աէտք է օգուր քայլ ուսումնասէր Շահի աշխ որամադրութիւնից և կրթական զործին աւելի մեծ ծաւալ կանոնաւորութիւն և, որ զիսաւորն է, մի ընդհանուր ուշութիւն տաչ, միացնելով բոլոր դպրոցները մի ընդհանուր կրթական վարչութեան հսկութեան ներքու, թէ ըստ ուսումնականին և թէ ըստ գնդեկսականին, առանց սական, միջամբելու բեղական ներքին կազմակերպութեանը, մշակելով բոլոր դպրոցների համար ուսման ընդհանուր ծրագիր և կանոնադրութիւն, բանալով բարձր կամ կենդրուսական, միջնակարգ և սուրբին-ժողովրդական ծիական ուսումնաբաններ:

III. Այս նպատակը հեղոցներէ իրագործելու համար հիմնեւում է Պարսկաստանի մակրագալաքում, թէհրանում, իբրև ամենից շատ լարմարութիւն ներկալացնող կենորոնում, մի կենորոնական լանձնաժողով, որին աջակից անդամներ կը լինեն նաև օպարերկրեալ քաղաքներու ապրու պարսկաստանցի հայեր և կրթական գործին համակրոշ անձինք:

IV. Աշխ լանձնաժողովը, որ պէտք է կոչվի «Պարսկահանոց կրթական կենորոնական լանձնաժողով», իբրև զիսաւոր վարիչ և վեկալի Շահի հաւաքարիմ հպատակ հայ մոլովդի կրթական գործի, գոնեւելու է նորին վեհափառութեան հովանաւորութեան և սադրազամի խնամակալութեան ներքու:

V. Միւս քաղաքներում և գեղերում գոնեւու դպրոցների հոգաբարձութիւնները կամ վարչութիւնները, անկախօրէն դոլութիւն ունենալով հանդերձ, համարւելու են կենորոնական լանձնաժողովի մասեր և համարափու ու պատասխանադրու են լինելու նորա առաջ, իբրև կրթական գործի ընդհանուր շեկը և վարչութիւնը իր ձեռքում կենորոնացնող մարմնի առաջ:

VI. Կենորոնական լանձնաժողովը մշակելու է մի ընդհանուր ծրագիր, թէ ըստ ուսումնականին, թէ ըստ գնդեկսականին, բոլոր, այն է

կենդրունական, միջնակարգ և սրբին-ժողովրդական ուսումնարանների համար, և ապա, բանակցելով Պարսկաստանում արդէն գոլութիւն ունեցող դպրոցների վարչութիւնների հետ, աշխ ծրագրիը ընդհանուր պարտադիր անելու մասին ձեռնարկելու է. ա) արդէն գոլութիւն ունեցող դպրոցների վերակազմութեանը նոր ծրագրի համաձայն, բ) նոր դպրոցների բացմանը.

ՎԻ. Կենդրոնական լանձնաժողովը հայթակելու է վերակազմուղ և նոր բացուղ դպրոցներին նիւթական միջոցներ ոչ թէ ամբողջովին, այլ ունացած ուելական միջոցների պակասորդը, աւսինքն աւելացնելու է արկամ այն դպրոցի ունեցած գումարի վրա աճ, ինչ որ պահասելու է դըպրոցը նոր ծրագրի համաձայն վերակազմելու համար. իսկ այն դպրոցների ծախքը, որոնք հարաւորութիւն չունին իրենք միջոցներ հայթակելու հոգալու է կենդրոնական լանձնաժողովը. Ծանօթ. Որ եւ է զպրոցի ունեցած աւելորդ միջոցները չեն պահանջւի նորանից մի այլ տեղ դորձագրելու համար, եթէ ինքը զպրոցի վարչութիւնը ինքնայօժար չառաջարկի:

ՎԻІ. Բոլոր դպրոցների գուքը թէ դրամական և թէ այլ, գոնուելով հանդերձ ուելական հոգաբարձութիւնների ձեռքում, համարելու է մասն ընդհանուր դպրոցական դրամագլխի կամ գուքի, որը կոչւելու է «Ընդհանուր կրթական ֆոնդ պարսկահայոց» և ընդհանուր համարակալութիւնը կամ հաշւապահութիւնը գոյնուելու է կենդրոնական լանձնաժողովի ձեռքում, որը արթուն հսկողութիւն է ունենալու իրեն կոնդրու անող մարմին, նաև զանազան քաղաքների դրամագլուխների պահով և անթերի պահպանութեան վրա ինչպէս և հսկելու է, որ աշխ դրամագլուխները ծառակեն իրենց նպատակին:

Տ. Կենդրոնական լանձնաժողովի առաջիկալ զլիաւոր գործը լինելու է. ա) բանալ երեք կենդրոնական ուսումնարան, մօգաւորապէս ֆրանսական լիսէնների ծրագրով, թէհրանում, թուրիզում և նոր Զուլայում, վերածելով հետզետէ և ըստ ներման միջոցների աշխ քաղաքների ազգակն վարժարանները կենդրոնականի. բ) բանալ աստիճանաբար մի քանի միջնակարգ չորս-դասարաննեան դպրոցներ այլ կենդրոններում. գ) բանալ սոորին ժողովրդական-ծիսական, մէկ և երկդասարաննեան դպրոցներ գիւղերում և մանկական պարտէզներ:

Խ. Կենդրոնական լանձնաժողովը պէտք է հրափարակի բոլոր դըպրոցների համար նպատակակարմար դասադրքեր, կազմուած ձեռնանանձերից:

ՀԱ. Կենդրոնական լանձնաժողովը պէտք է հրափարակի բոլոր դըպրոցների համար նպատակակարմար դասադրքեր, կազմուած ձեռնանանձերից պարտադիր են հայոց և պարսից լիզունները. Օտար լիզուններից զլիաւորապէս պէտք է աւանդուի ուուսերէնը, իսկ անդիմականը և ֆրանսականը ըստ լարմարութեան. Բոլոր առարկանները պէտք է աւանդւեն հակերէն լիզովի:

XIII. Գործի Նախաձեռնութեան համար կազմած է Թէհրանում ժամանակաւորապէս նախաձեռնող կենտրօնական յանձնաժողով, բաշկացած հերթեալ անդամներից. Մարտիրոս-խան Դաւիթխանեան, Յովհաննէս-խան Մասենեան, Համբարձում Առաքելեան, Արշակ-խան Գորոխեան, Ալէքսան Թունեան, Գոքոր Բաղիլ, Բաշդասար Տէր-Սարգսեան, Առաքել Գրիգորիան, Յովհէփ Միրզակեան, Ալբերտ Տէր-Յովհաննիսեան, Յարութիւն Բազիլ. Խոկ ալլ քաղաքներում, աջակից անդամներ. ա. Բագրէ՛ Մահմետի Սիմէօն Թումանեան, Ստեփան Տէր-Օհանեան, Արքահամ Մէլիք-Արքահամեան, Թիկին Եղիսաբէթ Սարգսեան, Աւետիս Փանեան, Ասդուածարուր Վաչեան, Յովհաննէս Սալաթէլեան, Լևոն Մանուէլեան, բ. Թիֆլիս' Ալէքսանդր Մէլիք Աղարեան, Բժշկապետ Բ. Նաւասարդեան, գ. Մոսկովյում՝ Թիկին Վ. Քանանեան, Թովմաս Թումանեան, Լևոն Սարգսեան, դ. Թաւրիզում, Սահակ եպիսկոպոս Ավգուտեան, Թաւրիզի Հալուչեաց Բարեգործ. ընկ., Առաքարականի Հալուչ. Բարեգործ. ընկ., Նազար Գորոխեան, Զաքարիա Նազարբէկեան, Դոքոր Կ. Փաշակեան, Բաշդասար Մէլիք-Սարգսեան, Գրիգոր Մէլիք-Աղարեան, Յակով Մէլիք-Սարգսեան, ե. Զոր-Զոր Ղայում, Մալաքիա եպիսկ. Տէրունեան, Դոքոր Աշանուր, Յովհէփ Արտընեան, Յարութիւն Տէր-Կարապետեան, Կառապետ Մէթ-Նահապետեան, զ. Ռազտում Աշաւել Յովհէփեան, Ասուածարուր Տէր-Օհանեան.

XIV. «Նախաձեռնուղ կամ ժամանակաւոր լանձնաժողովը պաշտօնունի. ա) կաֆարել բոլոր նախապարհասուական գործողութիւնները. բ) բանակցել ճեռնաս մարմինների և անձնաւորութիւնների հետ ծրագրւած կրթական միութիւնը ի գլուխ բերելու և թէ ընտրել տալու օրինական, մշտական, կոթական կենտրոնական լանձնաժողով, որի կենտրոնագելին կը լինի Թէհրանը. գ) կաֆարել ներկայ ծրագրի իրագործման վերաբերեալ բոլոր գործողութիւնները մինչև մշտական լանձնաժողովի ընդունումը, որից չետու նախաձեռնուղ լանձնաժողովը լուծած պէտք է համարվի:»

XV. Մշտական կենտրոնական լանձնաժողովի ընդունութիւնից ինուն պէտք է խմբագրի մշտական և մանրամասն կանոնադրութիւն, հիմն ունենալով ներկայ ծրագրի էական կէտերը.